

սուս ողորմնա ինձ և մի զրկեր զիս ի ցանկալի գանձուցա, զո՞ր
դու շնորհեցեր; Տէր, ալլաինոյ քում, զոր կամիմ տանել ի
ընակութիւն հարց իմոց: Եւ մինչ կային և պաղատէին, ահա
եկն այր մի միայնակեաց, որ էր բնակեալ ի լերին Հացունեաց,
և ասէ ցտիլինն, ով բարեպաշտուհի, հրամայեաց Տէր Աստուած
բնակել սրբոյնշանի խաչին յայսմ տեղւոջ: Եւ ապա լուեալ
ամենեցուն ի պաղատանացն՝ փառս տային Աստուծոյ: Իօկ բա-
րեպաշտ և աստուածասէր տի՛ինն՝ շինեաց ի տեղւոջ վայելուչ
վկալարան և եղանդ զիսաչն տէրունական: Արար վանս միա-
բանութեան գնեաց զաւանն Հայունեաց և զըռունդն աւանին
ետ վանացն, և զօրն զայն, յորում նստաւ ջորին կամսւ սուրբ
նշանին, մեծահանգէս աօն, կարգեցին և ամ յամէ զնոյն առ-
նել զենմամբ խոյոց և զուարակաց ի պատիւ սուրբ նշանին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա. Աթոռիս գրադարանի 1600—1700 թուականը գրած ձե-
ռագիրներից միայն 268 ձեռագիրներ ունին յիշատակարան,
մնացածներն առանց յիշատակարանի են: Աւելի բազմաթիւ են
յիշստակարան ունեցող ձեռագիրներն սկսած 1640—1700: Ա-
րովհետեւ այդ ժամանակամիջոցումն է ընկնում այն երկարա-
տե խաղաղութիւնն, որ Պարսից և Օսմանեանց մէջ տեղի ու-
նեցաւ, համաձայն դաշնագրութեան: Եւ որովհետեւ այդ դարի
վերջին երեք քառորդներում պատերազմներ չեն եղած Հայա-
տան երկրում: ուստի և այդ միջոցում գրած ձեռագիրների
յիշատակարաններում շատ քիչ յիշատակութիւն է լինում ա-
րիւնահեղ պատերազմների և սոցա հետեանք եղող աւելքածու-
թեանց, աւարառութեանց ու ժողովրդական վնասների: այլ
գանգատները դառն վիճակի վերայ աւելի են վատ և ագահ,
կաշառակեր և անարդար կառավարիչների վարմունքի դէմ,
ըստ որում երկարատե խաղաղութեան ժամանակ նրեանի խա-
ներից, շատերը կեզեքիչ և ժողովրդեան յափշտակող անձինք
են եղած, իրանց բազմաթիւ պաշտօնատար և անպաշտօն շր-

ջապառողներով։ Նոյնն եղած են և՝ այլ հայաբնակ գաւառների խաներն։

Այս դարի մանաւանդ՝ 1630—1700 թուականների յիշատակարանների մեծ մասը բովանդակում են տեղեկութիւնք Ս. Էջմիածնայ և այլ վանօրէից նորոգութեանց և սոյցա պիտոյքների մասին հոգացողութեանց վերայ, Նահաբասի ժամանակ և նրանից առաջ և յետոյ եղած պատերազմները շատ վնասեցին Հայաստանին առհասարակ և մանաւանդ Արարատիան աշխարհին, որ պատերազմների գլխաւոր ասպարէզն էր և որ առաւելապէս երկպառակութեան խնձորն էր երկու մեծ մահմետական պետութեանց մէջ։ Սորա վերայ աւելացան և բնական պատուհաններն, այն է սովոր և երկրաշարժները, որոնցից նշանաւոր էին 1611 թուականինը Առրպատականում ու մանաւանդ 1679ի Յունիսի 4ի մեծ շարժը Արարատեան և Արևեաց նահանգներում, երբ եկեղեցեաց և վանքերի մեծ մասը փլատակդան, ինչպէս և շատ քաղաքների ու գեղերի շինուածներ քանդուեցան կամ քայքայուեցան։

Պատերազմը ծնումէ դիւցազներ, առած է։ Եւ ահա այդ աղէտներից յետ հանդէս են գուլը գալիս մի շարք շինող և նորոգող կաթողիկոսների և այլ եկեղեցականների, որոնք մաքառելով պատերազմների պատճառած և բնական աղէտների դէմ, զբաղում են եկեղեցեաց, վանքերի և այլ կարեւոր հաստատութեանց շինութիւններով։ Այսպիսի շինող կաթողիկոսներից 17 երրորդ դարում եղած են երջանկայիշատակ Մոլսէս, Փիլիպպոս, Յակոբ, Եղիազար, Նահապետ և այլ հայրապետք ազգիս, նոյնպէս և այլ եկեղեցականք, առաջնորդ եպիսկոպոսներ ու վարդապետներ։ Սոքա ոչ թէ նիկութեղէն շինութեանց վերայ միայն հոգացել են, այլ և մեծ ջանք ունեցել են և եկեղեցականաց մուաւոր ու բարոյական կրթութեան վերայ, ուստի և այդ դարը շատ հարուստ է թէ նշանաւոր եկեղեցականներով, որոնք միմեանց աշակերտներ են եղած և բազմաթիւ ձեռագիրներով, որոնք հետևանք են թէ եկեղեցականաց ուսումնական պարապմանց և թէ եկեղեցեաց ու վանօրէից բարեզարդութեանը կարեւոր մատեանների պատրաստութեան։ Վերըիշեալներից պարզ է, որ այս դարին, ձեռագիրների յիշատակուրոնները բնական ապէս պէտք է բովանդակեին առաւել տեղեկութիւնք նորոգու-

թեանց և վերաշինութեանց մասին, ինչպէս և է՝ և որ ընթերցողը կարող է տեսնել Արարատում հրատարակվող յիշատակարանների քաղուածքներից:

Ա. ԷջՄիԱԺՆԻ ԴՐԱԳԱԲԸՆ

Զեռագիր 1677. է Միքայէլի Ասորեոյ պատրիարքի պատմութիւնը, քառածալ: Արոտագրած են Ամիրշահ և Յովհաննէս ստրկաւագները 1622 թուականին Քրիստոսի:

Ահա այս ձեռագրի յիշատակարանի պատմական մասը:

Փառք ամենասուրբ Ներորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Գրեցաւ այս Միկայիլս ձեռամբ սարկաւագացն Ամիրշին և Յովհաննիսին, որ սկիզբն առնէին գրչութեան և ուսանէին առ ոտս տէր Մինաս գրչի, Աստուած իւրեանց շնորհք և իմաստութիւն տայ: որ զայս հոգեւոր արուեստակատրեալ ուսանին, Թուէն ՌէԱԱ. Յունիս Եէ. օրն ուրբաթ, եկին խափումիկ ի Կոստանդնուպօլսէ բերին Ամեայ ֆաշային Բ. կապայ, ու ասացին, թէ՝ ծառայքն խիստ աղմուկ խորվութիւն արարին, զՍուլթան Օսման սպանին, և գրին ի տեղն շուռվթան Մուստաֆան, և այլ շատ մեծ մեծ վազիրներ սպանին, զշարն և զբարին. Աստուած գիտէ, զվերջքն, Աստուած ի բարին առաջնորդէ: . . . : յիշեցէք եւն:

Այս յիշատակարանում յիշված Սուլթան Օսմանը, Ահմէտ առաջինի որդին էր, որ վախճանեցաւ 1618 թուականին, յաջորդն իւր հօրեղբօր Մուստաֆայի, որ երեք ամիս միայն թագաւորելից յետ, իւր խելագարութեան պատճառով գահընկէց եղաւ և թագաւորեց վերոյիշեալ Օսմանը 13 տարեկան հասակում: Սա թէ և շատ երիտասարդ, բայց խիստ էր և հասուատուն կամքի տէր: Սա ուզեց ենիշերիների կամայականութիւնը զսպել. ուստի և խստութեամբ վարվում էր թէ անհնազանդ զօրականաց և թէ կաշառակուր ու անարդար պաշտօնատարների դէմի սւստի և ատելի դառնալովնրանց, բանի խեղդամահ եղաւ նրանցից և վերստին գահը բարձրացաւ նորա հօրեղբայր կիսախելագար Մուստաֆայն, որոյ ժամանակ շատ թշուառութեանց ենթարկեցաւ Օսմանեան պետութիւնը: Ահա այս երիտասարդ Օսմանի սպանութիւնն է յիշվում վերոյիշեալ յիշատակարանում և որովհետեւ այդ սպանութիւնը բռնութեամբ և ապստամբութեամբ եղաւ, որով թագաւորի հետ և շատ նշա-

նաւոր անձնաւորութիւնք զոհ գնացին և թագաւորեց խելագար Մուստաֆան, ուստի և ժամանակակից յիշառակազիր սարկաւագունք տօսւմնն . « Աստուած գիտէ զվերջք . Աստուած ի բարին առաջնորդէ » :

Զեռագիր № 1513. Յիսուս Որդի, և ութածալ բոլորագիր :
Գրիչն է Եսայի սարկաւագ 1625 թուականին Փրկչի .

Ահա յիշառակարանի պատմական մասը :

Արդ՝ գրեցաւ սուրբ տառս ի դառն և ինեղ ժամանակի, յորում փայլէ վարդապետոս մեր տէր Մովսէս քաջ բարունին յաշխարհէն Սիսակայ՝ յերկրէն որ կոչի Անանան ի գեղջէն Խոտանանու, և յաթոռոյն Ստաթէի, որ այժմ կոչի Տաթե . Որ լուսաւորէ զազգս Հայկազեան և ժողովեալ կրօնաւորական դասս և նորոգեաց զվանօրայս և զանապատս կրկին հաստատեալ պայծառացոյց : Եւ ապա բազում աշակերտօք գնացեալ յԱյրարատեան գաւառ, որ և անդ տիրեալ էր իշխան ուն ազգաւ Պարսիկ, Ամիրգօնայ անուն կոչեցեալ քաջ և արի հմուտ ի պատերազմ, մինչ զի յահէ նորա, որ չկայր նման նման, թէպէտ կրօնիւք այլազգի էր, սակայն բարեպաշտ և երկիւղած էր և քըրիստոնէասէր, մինչ զի հանդիպել սրբոյս անդ՝ յոյժ փափագանօք ընկալեալ, և բազում սիրելութիւնս ցուցեալ և տուեալ տեղի մի, որ կոչի Անանիա առաքեալ, գեղեցիկ և վայելուչ ի մէջ այգաստանեայց և գնացեալ անդ վարդապետոս նորոգեաց, և ժողովեալ բազում աշակերտս և կրօնաւորս և միայնակեացս և կարգեաց դպրոցս այլ և բազում կարգս և կրօնս հաստատեաց . յորում ժամանակի էր թագաւորն Պարսից՝ Ապասն կոչեցեալ, որ տիրեալ էր յարեւելից կողմանէ Հրմիզն կոչեցեալ կղզի, անտի մինչև ի Բաբելոն և Հայաստան, և Վրացտունն՝ մինչև ի ծովն Կազբից : Եւ էր թուականն Հայոց ՌՀԴ. բազում նեղութիւն եղեւ աշխարհին Վրաց կոտորմամբ որոյ և գերութեամբ . ու կարէ պատմել զաղէտս նոցա : Ժամանեցուք յաւարտ բանիս . գրեցաւ գիրքս ձեռամբ Եսայեայ սարկաւագի յերկրին Արարատեան ի գաւառն կոտաց ի մայրաքաղաքն Երևան, ի դուռն սուրբ ուխտին Անանիա կոչեցեալ՝ առ սու

քաջ բարունոյն Մովսէսի, որ և ծառայ և տրուպ աշակերտաց իսկ եմ, յաշխարհէն Սիսակայ, յերկրէն Գուրհամու, գեղջէն՝ որ կոչի Կարճաւան, Արդ՝ աղաւեմ զամենեսեանսդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակիլով՝ յիշեցէք ի մաքրափայլ աղօթո ձեր Եսայիոս հանդերձ ծնողօքս իմ ևս առաւել զրաբունին իմ զտէր Մովսէս, և դուք յիշեալ լի՞իք առաջի ատենին Քրիստոսի հանդերձ ննջեցելովք ձերովք ամէն:

Թողութիւն արարէք եղբարք սիսալութեան գրոյս, իսիստ շատ օրինակ բերի մէկտեղ ապա գրեցի. կայ՝ որ կարգին է, կայ՝ որ յուսանցն է :

Այս յիշատակարանում յիշվում է այն նեղ և դառն ժամանակն, որ հասցրեց Պարոից Նահարաս թագաւորը Հայոց ազգին, սորա մեծ մասը Արարատեան աշխարհից գաղթեցնելով Պարսկաստան և մեծամեծ վնասներ հասցնելով երկրին իւր պատերազմներով Օսմանյոց դէմ։ Յիշվում է նոյն յիշատակարանում և Մովսէս քաջ բարունին, յաշխարհէ Սիսակայ, Խոտանան գիւղից, որ նորոգում է վանկերն ու անապատներն, ուր ժողովում է կրօնաւորական դասն և լուսաւորսում է Հայոց տպգը։ Այս Մովսէս վարդապետն, Սիսական երկրից երթալով իւր աշակերտներով Արարատեան աշխարհ, գալիս է Երեան, ուր իշխում էր այդ ժամանակ Ամիրգունայ խանն, որին նշանակել էր կառուվարիչ նորանուաճ մասին Հայաստանի ինքը Նահարասն և որ մեծ դեր խաղացել էր Հայերին Պարսկաստան գաղթեցնելու գործում։ Այս Ամիրգունան ինքն ըստ ինքեան քաղցրաբարոյ և աշխարհաշէն մարդ էր. ուստի և Արարատեան աշխարհում մնացած Հայերի հետ քաղցրութեամբ և սիրով վարվում էր, որպէս զի նոցա ձեռքով շինդի երկիրը։ Եւ ահա սա հաւանելով Մովսէս վարդապետին, նորա գիտութեան և խոչեմութեան համար, տուեց նրան տեղի բնակութեան Անանիա առաքեալ անուանուած վանքը Երեանում, ուր և Մովսէս գիտնական վարդապետը հաւաքեց աշակերտներ, որոց ուսուցանում էր, կազմեց միարանութիւն, կարգ և կանոն դրեց նոցա մէջ և պատրաստեց շատ ընտիր եկեղեցականներ։ Աս այն Մովսէս վարդապետն էր, որ մեղքամոմ սպիտակացնելու արհեստովը շատ հաւանելի եղաւ Նահ - Աբասին և ոորա շնորհիւ ու Զուղայեցւոց միջնորդութեամբ ապագայում եղաւ Ա. Էջմիածնի

փակտիուլ և ապա կաթողիկոս ու նորոգեց Էջմիածնի Տաճարն, որ Շահաբասի և Օսմանղոց մէջ եղած պատերազմների ժամանակ գրեթէ աւերակ էր գարձած և մինչև իսկ մինչև Մովսէսի կաթողիկոսութիւնն իշխող մեր կաթողիկոսունք չէին նստում այնուել, թէ յարմար տեղ չինելուն և թէ ժամանակի խռովութեանց պատճառով, այլ թափառում՝ էին քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ։

Նոյն իշշատակարանում կարդում ենք. « Եւ էր թուական Հայոց ՌՀԴ (1625) բազում նեղութիւն եղեւ աշխարհին Արաց կոտորմամբ սրոյ և գերութեամբ, ո՞ կարէ պատմել զաղէտոն նոցա» : Այս աղէտից պատմութիւնը մանրամասնօրէն պատմում է Առաքել պատմագիրը իւր պատմութեան ժԱ. գլխում։ Վերոյիշեալ իսոպերը ակնարկում են Շահաբասի արշաւանաց երայ, որ նա տրաւ Կախեթու Թամրազ և Կարթլի Լուարսափ թագաւորների գէմ, որոնք հաւատարմութեան դաշն կռել ի ին միմեանց հետ ընդհանուր ուժով դիմագրելու Շահաբասին։ Վերջինս Կախէթն աւերելից և բնակչաց մի մասը Պարսկաստան զաղթեցնելուց և Ֆահրապատում և սորա գաւառում բնակեցնելից յետոյ մտաւ Կարթլ և ոիրեց սրան և ապա պատրանօք ձերբակալելով Լուարսափ թագաւորին, տարաւ հետը Սպահան և ապա պատրեց Նիրազ, ուր և սպանվեցաւ նա դաւանութեամբ։ Այս մասին ցանկացողք կարող են կարդալ մանրամասնութիւնք Առաքել պատմագրի երկասիրութեան ժԱ. գլուխը։

Զեռագիր № 1197. Է Մեկնութիւն Սաղմոսաց ի Վարդանայ քառածալ բոլորագիր. գրիցն է Մարութա երէց Գողթան գաւառի Ցղնա գիւղից Փիլիպպոս կաթողիկոսի ժամանակ ՌՀԴ թ. Հայոց և 1634 թ. Փրկչի։

Ահա իշշատակարանի քաղուածքը.

« Արդ եղեւ աւարտ գրչութեան քաղուածոյս երգարանին Գաւաթի ձեռամբ մեղապարտ Մարտիրոսի, հայկազեան տօմարի հազարերորդի, ուժսուն երորդի և երեք երորդի թվի, դառն և գծնիկ ժամանակի, որ հայկազեան սեռս մեր արոհի ի ձեռն Հաքարացոց յամենայն տեղիու Հոյաստուն, Վրացտուն, Մարաց-

տուն, և հոռոմոց տուն, ոչ միայն այլ սեռից այլ և սուտ անուն քրիստոնէից։ Որ յայսմ ամի Յոյնք մոլորեցան և ծռազատիկ արարին որպէս ասէ գիր պարզատումարին, յորժամ հոռոմոց եօթներեակն Գ. Յ. լինի, վերադիրն Թ. բանալի գիրն Շ. Յունք մոլորին, արդարեւ մոլորեցան յայսմ ամի և բազում չարիս հասուցին ազգիս մեր մինչ ԽՌ. զուռուշ տուքանս ես սուրբ Աթուն մեր երուսաղէմ։ բայց ամօթով յետս գարձան։ Եւ յայտնութիւն լուսոյ բղխման։ Յորժամ թուականս մեր ՌԶԲ էր վախճանեցաւ սուրբ հայրն մեր տէր Մովսէս կաթուղիկոսն։ սուգ մեծ եթող մեզ և ազգիս։ Յետ նորա յաջորդեաց հարազատ և երէց եղբայրն մեր Տէր Փիլիպպոս վարդապետն և սա ևս փայլէ որպէս զարեգակն ի մէջ սեռիս մեր։ և բազում զորդիս ի փառսէած, որպէս սուրբ հայրն մեր։ հարազատ գոլով նմանութիւնն հօրն առ ինքն բերէ։ Դարձեալ ես տրուպ և յետինս յաշակերտաց սրբայն Մովսիսի Խաչատուր բանասէրս :

Փիլիպպոս Կաթողիկոսի հայրապետութեան երկրորդ տարին եղաւ ծռազատիկ, որոյ ժամանակ սովորաբար մեծ թշնամութիւն և կոիւ էր պատահում Հայոց և Յունաց մէջ երուսաղէմում։ 1634 թուականին, երբ երուսաղէմում պատրիարք էր Հայոց Գրիգոր Մոկացին, որ մականուամբ Պարոն Տէր էր կոչվում, պատահեցաւ ծռազատիկ։

Սա շատ աշխատեց շահէլ Յունաց մեծամեծների սրտերն, որ աղմուկ և շփոթութիւն չպատահի ծռազատիկի առթիւ։ բայց ի զուր եղան նորա ջանքերը։ Յոյները նամակ առան Բ. գռնից և Դամասկոսի կուսակալին իրանց կողմը դարձնելով, սկսան սպառնալ Գրիգոր պատրիարքին, թէ նա չէ կարող իրան և իւրայնոց ապրեցնել, եթէ Յունաց հետ չի տօնիլ զատիկը։ Երբ Հայք, Յա. կորիկներն, Հաբեշներն ու Նիտիք յանձն չառան, Յոյնք քշեցին ամենքին սուրբ Յարութեան տեղից Հայոց վանքն և զինաւորված սրերով և թրերով մեծամեծ չարիք էին սպառնում Հայերին։ Գրիգոր պատրիարքը զանազան տեղերի հայերից օգնութիւն չգտնելով, որովհետեւ ժամանակը կարճ էր, դրամով շահէց երուսաղէմի քաղաքապետին։ Այդ ժամանակ երուսաղէմ հանդիպեցաւ իբրև ուխտաւոր Աւետիք Բաղիշեցի ոմն, որ ապստամբ Մանօղուի գէմ Ասօրիք ուղարկած Գիւշիւկ Ահմետ փաշայի հանդերձապետն էր։ Սորա միջնորդութեամբ Ահմետ

փաշան զեկուցեց Դամասկոսի կուսակալին որ հսկէ Յոյների վերայ Երուսաղէմում և թոյլ չտայ նրանց վնաս հասցնելու Հայերին։ Կուսակալը զօրք խրկեց Երուսաղէմ, որի գլխաւորը Յարութեան տաճարի դռները փակեց Յունաց զատկի օրն և բաց արեց Հայոց Զատկի տօնին, ընկճելով Յունաց գոռողութիւնն և իրոխտանքը։ Յայտնի բան է այս առանց ծախքի (կաշառքի) չեղաւ, որ սովորական էր տաճիկ պաշտօնատարների համար։ Սրան են վերաբերվում յիշատակարանի ԽՌ կառապաշտութերը։

Զեռագիր Նվ 1881, է գիրք Սաղմոսաց Դաւթի՝ գրած 1646թ. Տաթեու վանքում։ Դրիչն է Մկրտիչ քահանայ։

« Յորմէ շնորհէ սատարեալ յանգեալ աւարտեցաւ տառս մտկացական և գիծս իմաստափրական, արտադրութիւնս փիլիսոփայական և ասացուածս նրբաճառական։ Յամի հազար երրորդի և երկրորդի թուահաշշուութեան Արամաղեանս։ ըստ հոլովման մեծի չափողին և պատճառին ամանակի ի Մարգաց ամսոջ Եւ ի յօգոստովի ըստ հռոմայեցոցն քսան և մէկ։ Առ հովանեաւ լուսանկար և տիեզերածտւալ գերագահ սուրբ Աթոռոյս Էջմիածնի։ Յորում միջի կայաւորեալք են բազմութիւնք եղբարց կուսակրօնից՝ իբրև յիսնեակ թուով, միշտ յԱստուծաշշունչ գիրս պարապեալք և յար ի քննութիւնս բանախօսական տառից կրթեալք։ Ունելով գլուխ և առաջնորդ ուսմանս այսորիկ՝ զմեծ հռետորն և անյաղթ փիլիսոփոսն, ամենավսեմականի հոգւոյն ընդունարանն, և զի՞նչ եթէ ոչ երկրորդ Դաւիթ և Մովսէս շնորհեալ ազգիս մերում, Սիմէծն ասեմ, զմայլեալն առատաբար ի վերնական զեղմանէ, յորմէ ուռոճացան յոգունք քերթողութեան արուեստիւ և արտաքին գրոց տեղեկութեամբ, և Աստուծախօս տառից ծանօթացան ըստ որում պատճառի և զգիրս զայս ստացայ։ Քանզի ըստ յաւետ ունակ իմաստաութեան մտաց իւրոց պարզագոյն իմացուածովք քերականութիւն յօրինեայ, և ուսոյց ամենումեք։ Գոլով գաւառաւ Զուղայեցի, որ այժմ ի Շօշ քաղաքի ընակեալ են արքայարանի Պարսից, աշակերտ եռամեծին և բազմերջանիկ վարդապետին Խաչատրոյ։ Արդ՝ սկիզբն այսոր գիտութեան՝ եղեւ

խստակրօն և ճգնազգեաց վարդապետն Մելքիսէթ՝ որ էր յԱրարատեանս գաւառէ, և ի նմանէ ծանօթացաւ սա, բայց սակայն բազմովաստիաբար առաւելաւ գիտութեամբ սա, սակաւ յոյժ առատութենէ մոտաց իւրոց՝ որպէս և քերտկանութեանս իրողութենէ որում ոչ ոք երթէք էր տեղեակ յազգէս մերմէ՝ ի վաղուց հետէ մինչեւ ցայսօր ամանակի ըստ այսմ։ Ուստի և որքանութիւն իմաստութեան սորա՝ սովաւ ծանուցանի այնոցիկ մըտաց՝ որք իսկապէս կարեն բացորոշել զդիտաւորութիւն քերթողութեանս։ Այլ մեք դարձցուք ի կարգ անկեալ բանիս՝ զոր սկսաք։ Արդ՝ գոլով այցելու և գիտապետ տոհմիս Հայկական, երջանիկ և ճգնազգեաց իմն արտասանեալ՝ Ցէր Փիլիպպոս բան ջահից մակադրեալ, որ արդարեւ ըստ անուան իւրոյ փայլէ յաւուրս յայսոսիկ իրբեւ արեգակն միջօրէի, երանելի կենցազավարութեամբ և առաքինաշաւէիդ ընթացիւք, պատճառ բարեաց բազմաց լինելով ուղղութեան կարգաց, շինութեան եկեղեցից և այլ ամենայն բարեձեռութեանց։ Ուստի ևնոր նորոգեալ պայծառացոյց զոիեզերական Աթոռոս թէպէտ և ոչ սկիզբն՝ սակայն զվախճան գեղեցկապէս յանգեադ, ըստ որում Դաւթին առաջարկութիւն, Առղոմոնեան եղրտկացութիւն տեսանի. վասն զի յառաջ քան զսա սրբազան և երջանիկ հայրապետն Մովսէս, որ էր ի Սիսական նահանգէն համեմատ գրեալն ամենայնիւ արդիս։ Ղրու ոչ ոք կարասոյէ ըստ քանիսութենէ նորա արտավիպել, և զի՞ է քեզ, կալջիր նպատակ զպարթեն Սահակ կամ զմնծն ներսէս, ըստ ընութեան բարուցն, ըստ մուգրութեան կենացն, ըստ ուղղութեան ընթացից, ըստ առաւելութեահ արդեանցն ի վերայ աղգիս։ և ըստ այլոց ամենայնի։ Ան երիցո շոգաւ առ թագաւորն Պարսից և յոյժ սիրեցաւ ի նմանէ՝ որով և ազատեաց զԱթոռոս մեծ ի դիմոսուկան հարկաց ծայրագունից, որ յանուղղայ գործ առանորդաց Աղգիս մտեալ էր. սա ի ներքոյ չարտգոյն, լծոյն այնորիկ՝ խափանեալ երարձ զայն՝ երջանիկս գէտ շնորհաքն Քրիստոսի։ Եւ զի՞ ի այնորիկ սկիզբն արար ի մսգրել զսա յաղբիւսից բազմակութից, լայնանիստ պարսպօք բոլորեաց և զերից կովմանց շինուածսն աւարտեաց, որ ինչ միանգամ հարկաւորութեան և ըստ պատշաճաւորեա . . . պիտոյանայր քարիւ և կրով կարծրակառոյց ամրութեամբ։ Նաև զգմբէթ մեծի տաճորիս ի բաց առեալ շքեղացոյց, քանզի էր խարիսաւ-

եալ և կար ի նիստ։ Եւ յետ այնորիկ՝ եղեւ զրաւ կենաց իւրոց
 փոխեցաւ յաստուստ յանմահական կեանսն՝ ի հազար երորդ
 ութսներորդ երկրորդ թուսոյ մերոյ՝ գոլով վաթօուն ամաց՝ կա-
 լեալ զաթոռ Հայրապետութեան՝ ամս չորս և ամիսս ըստ ա-
 մացն։ Իսկ զկնի երանելւոյն՝ փոխանորդեաց աշակերտ նորին
 Տէր Փիլիպպոս դիտապետն՝ զորմէ նախաճառեցաք։ Եւ սա լցոյց
 զթերին, քանզի զտանիս սուրբ Աթոռուս պայծառապէս նորո-
 գեաց մինչեւ ի գոտին և զբրգունան եւտակի, զդրունան երից
 կողմանց և զաստիճանսն շուրջանակի, և զարեւելեան ձեռա-
 կերտոսն և զայլ ամենայն շինուածս ըստ պիտոյից սորաւ Յորայ
 աւուրս ընդ շինութեան մեծի Աթոռոյս՝ նորոգեցան պայծա-
 ռապէս և եկեղեցիք սրբոյն Հռիփսիմէի և սրբոյն Գայիանեայ՝
 հանդերձ յայտնութեամբ պատուական նշխարաց իւրեանց։
 Էնդ որոյ հովանեաւ և մեք ընդ յոքունս բարւոք տնօրինեալ
 խնամիմք և տածիմք։ Զոր շնորհեացէ մեզ Տէր Աստուած խորա-
 գոյն խաղաղութեամբ և յաւէտ իմն յարամնացական ամօք
 կալ մնալ բարի հովիւ՝ ի պատճառս սփոփութեան վարատեալ
 ազանց մեր։ Եւ արդ գրեցաւ իմաստասիրական գիծս յամի հա-
 զար երորդի ինսներորդի հինգերորդի թուականութեանս Արա-
 մազեանս տոհմի առ հովանեաւ հոյակապ մեծի Աթոռոյս Ստա-
 թէի՝ յաշաբարհիս Սիւնեաց, ձեռամբ Մկրտչի միանձնական և
 սրբակրօն քահանայի երկրաւ Լեհացի. որ անուանի Սարմատիա:
 Բայց զթուղթ այսորիկ գրոց շնորհեաց՝ տէր իմ և խնամող ըստ
 ամենայն պիտոյից՝ ի մանկական տիոց՝ մինչեւ ցայս վայր Սրբա-
 զան բարունապետն Յակովը, որ է փոխանորդ Տեառն Փիլիպ-
 պոսի երջանիկ հայրապետի. և ի բոլոր անձնէ և արիական սըր-
 տիւ գոտեռեալ՝ ճգնող ի վերայ ամենայն գործառնութեանց
 նորին, իսկ և զտաճար սրբոյն Ստեփաննոսի նախավկային, որ
 ի ձորն Շամքի անուանեալ՝ Ճքեղաղարդ յօրինուածով կառոյց,
 զորոյ կեանս պարսպեսցէ Տէր, և պարգեեսցէ ընդերկայն ա-
 ւուրս լինիլ ի գովեստ փառաց անուան իւրոյ, զոր յիշել աղա-
 ցեմ յազօթս երկնանուէրս։ Այլ և գրողի զսկզբնագիր բանից
 գլխոց կարմրագեղով՝ տեառն Ստեփաննոսի հոգիընկալ քահա-
 նայի և իմաստից պարապողի՝ համագաւառաւ գրոցս գծողի,
 և ոսկենկար ծաղկափթիթ որակաւք պաճուճողի՝ Սիմէօնի
 վարդապետի՝ ի Քրիստոս հանգւցելոյ, մասն բարեաց՝ ձերովք

մտղթանգը շնորհեացէ : Իսկ և աւանդողի գաղափարի սորին՝ այս սորիկ գրոց՝ Մովսէսի քաջ բարունույ մակացութեանց յարահետեղի, յորոյ աշխատասիրութենէ ստուգաբանեցաւ ըստ քերթողական արհեստի, և ճշգրիտ իմացուածով օրինակ գրոյս, ուստի և ածանցեցաւ, ընդ որոյ հատուցումն ըստ վաստակոց նորա՝ տացի՝ յամենառատ գթութեանց անտի՝ Աստուծոյ՝ Նաեւ հարազատական գթով սիրեցեալ եղբօր մերոյ՝ Տէր Պօղոսի, որ աշխատակից եղեալ ի սրբագրութիւն տառիցս, փոխարինութիւն յանպատում բարեացն եղիցի՝ հանդերձ համօրէն եղբայրական պարուք և դասուք կրօնակցօք գումարելոց ի տիեզերական աթոռս սուրբ Եջմիածնի : Այլ և քանզի երանելին Սիմէօն վարդապետն ոսկեաւ օծանելն զծաղկունս՝ որ ի սմա՞ փոխեցաւ ի Քրիստոս, վասնորոյ և անկատար մնաց՝ բայց աւարտեցաւ ի Շօշ քաղաքի՝ ի ձեռն Հայրապետի ուրումն, օգնականութեամբ և ծախիւք Միքայէլ վարդապետի սիրեցելոյ մերոյ, որում Տէր վարդատրեացէ : Իսկ բայրապէս կատարումն է առամենայնիւ յամի հազար երորդի հարիւրերորդի երկրորդի ի գերազահ մայրս լուսոյ՝ Սուրբ Եջմիածինս, Սեպտեմբերի սկզբանն :

Յայտնի է, որ մեր հինգերորդ դարի թարգմանիչները յունական գիտութեան հմտանալով շատ գրքեր թարգմանեցին, ինչպիսի էին Սահմանք, Պարփիւր, Ստորագրութիւնք, Պերիարմենիաս, Առաքինութեան գիրք, Վերլուծական և այլն, որոց ուսումն աւանդում էին իրանց աշակերտոց և այսպէս շարունակ հայ եկեղեցական դասի մէջ վերոյիշելոց հմտութիւնն արդարին գիտունիւն անուամբ շարունակվում էր: ԺԵ և ԺԶ դարերն ամենախաւար ժամանակն էր հայ եկեղեցականութեան համար, իբրև դառն և ծանր ժամանակ հայ ազգի քաղաքական վիճակի, որոյ պատճառով և տգիտութիւնը տիրեց հայ եկեղեցական դասին ու վերոյիշեալ գիտութիւնք գրեթէ անհետացան նորամիջից: Բայց ԺԵ դարի սկզբում արտաքին գիտութեան մշակութիւնը կրկին նորոգվեցու մանաւանդ Մելքիսեդեկ վարդապետի, Ներսէս բեղլու վարդապետի աշակերտի ջանքով, որ շատ տարիներ անձնատուր լինելով ընթերցման վերոյիշեալ մատենից,

հմուացաւ « աշտառին գլուխուեան » , և գալով Ս. էջմիածին Մովսէս կաթողիկոսի ժամանակ՝ ունեցաւ շատ աշակերտներ, որոնց մէջ նշանաւոր եղաւ Սիմէօն Զուղայեցին, որ ի բնէ սրամիտ և ճարտար էր: Սա գերազանցեց իւր ուսուցչին, դասատութիւնն արտաքին գիտութեանց հեշտացրեց, կազմելով առանձին դասագիրք և երթալով Զուղայ իրեւ ուսուցիչ, Մովսէս կաթողիկոսի ժամանակ, Խաչատուր վարդապետի հետ, որ նոր Զուղայու առաջնորդ նշանակած էր, ունեցաւ շատ աշակերտներ, որոնց շատերը եղան երեւելի անձնաւորութիւնք, թէ իրեւ Զուղայեցի առաջնորդներ և թէ իրեւ կաթողիկոսներ: Այս Սիմէօն վարդապետը Փիլիպպոս կաթողիկոսի ժամանակ ունեցաւ շատ աշակերտ և Ս. էջմիածնում: և վախճանեցաւ Հաւուց Ժառ վանքում: Այսպէս ծէ գարի առաջին քառորդից միսածնոր Զուղայն և Ս. էջմիածինն դարձան գիտութեան կենդրոն Հայ եկեղեցական դասի: Սրան վկայ են շարք կաթողիկոսաց, որպիսիք էին Մովսէս, Փիլիպպոս, Յակովը, Խաչապետ և այլն, ինչպէս և Զուղայի առաջնորդներ, որպիսիք էին Խաչատուր, Դաւիթ, Յակոբ, Ստեփաննոս և այլք, որոնք թէ իրեւ շինողք և թէ իրեւ ուսումնասէրք յայտնի եղան: Այս դիրքին նըպաստեցին և քաղաքական հանգամանքներն, այն է երկարատես խաղաղութիւնը Պարսից և Օսմանցոց մէջ (1641—1694 թ.): Բայց Պարսից Շահ Սուլէյմանի (1694—1722) օրովկրկին վրդովեցաւ Պարսից երկիրը, Աղուանից ապստամբութեամբ և այլ պատերազմներով, ու կրկին վերադարձան դառն ժամանակները և նպաստեցին տգիտութեան տիրելուն: Սոյն յիշատակարանի մէջ յիշվում են Մովսէս և Փիլիպպոս կաթողիկոսների նորոգութիւնք և շինութիւնք: որ արին Ս. էջմիածնում: Վերոյիշեալների մասին մանրամասնարար ցանկացողք կարող են կարգաւորել և Խաչատուր Զուղայեցի (վերջինս անտիպ) պատմագիրների գրութեանց մէջ:

Զեւագիր № 894, է ձաշոց մեծագիր բոլորագիր, զարդարած ուկենկար պատկերներով խորաններով և գլխատառերով: Գրողը Ստեփաննոս քահանայ է. իսկ նկարող և զարդարողք են Ալէքսիանոս և Խաչատուր Զուղայեցի (վերջինս անտիպ) պատմագիրների գրութեանց մէջ:

համար, բայց աւարտած է Յակոբ Զուղայեցի կաթողիկոսի ժամանակ։ Գրութիւնը սկսած է 1653 և աւարտած է 15 տարիից յետ։ Ահա յիշատակարանի պատմական մասը։

Եւ արդ գճագրեալ աւարտեցաւ գիրքս՝ յամի հազար երորդի երկորդի թուահաշուութեան Արամեանս տոհմի։ Եւ ըստ մարդացելոյ բանին Աստուծոյ՝ հազար երորդի վեց հարիւր երորդի յիսներորդի երրորդի, որպէս աւանդեցին մեզ ճշմարտապատում օրինակագիրքն առաջինք։ Յաւուրս իշխանութեան պարսից Շահարասի երկրորդի որդւոյ Շահսէֆու՝ որդւոյ Շահարասի առաջնոյ, ընդ որով տէրութեամբ և բոլոր Հայաստանեայց երկիր նուածի անկշռելի տուժից նեղութեամբ և հարկաց ծանրութեամբ և իսկամ ծառայութեամբ՝ որպէս երբեմն Խորայէլ՝ ի հնումն, որոց հզօր բազուկն փրկող լիցի՝ որում ամենայն ինչ հնարաւոր է։ Խոկ ըստ հոգեոր վերատեսչութեան Տեառն Փիլիպպոսի սրբազան Հայրապետի՝ կրկին լուսաւորչի, նոյն և ստացողի այսորիկ մատենի, զորոյ հանդէս կենաց և զքաղաքայարութիւն վարուց և զնրբութիւն շաւլաց նորա, տինա՝ և զարդիւնաւոր վաստակ նորա առ ազգս Հայկային և զջատագովութիւն Աստուծոյ օրինաց և զպահպանութիւն կանոնական հրամանաց։ Ես և զնուիրական փոյթ սինդութեան նորա՝ յընծայել զբազում անձինս Հօրն վերին և արթուն ակամրք հովուել զնոսին՝ մինչեւ նկարեացի Քրիստոս յոգիս նոցին։ Նաեւ զպայծառացուցիչ կարգ նորա առ սահմանադրութիւնս եկեղեցւոյ և անխոնջ տքնութիւն իւր առ ի անթերի պահել զայնոսիկ և զերեւելի տօնախմբութիւն հոգեորական պարուց՝ առ ի նըմանէ եղելոց, և զամենայն բարեձեռութիւն ի նմին երանելոյ յօրինելոյ՝ թողցուք այլում վայրի շարահիւնել, և կամ այլում վիխողի վեհի պատմագրել, ապա թէ ոչ՝ անվրէպ գիտողին միայնում մնալ՝ յորում ամենայն գանձք ծածկեալ կան, զի յայտնեսցի յաւուր արդարագատութեան իւրոյ և անխար դատաստանին, Արդ՝ սոյն սա երջանիկ Հայրապետո ընդ բազում ուղղութիւնս յաւել և զնորոգութիւն նախագահ աթոռոյս մեծի կամիածնի։ Քանզի՝ տանիս սորին գոլով քակեալ և խարիսալեալ բոլորովին, վասն որոյ և կազմեաց ամրագոյն մածուցմամբ ընդ նմին և զբազունոն եռակի և զեղերս տանեացն շուրջանակի առատացուցեալ և զսրբութեան սպասան՝ զոսկեղէնս

և զկերպասեղէնս և զնկարակերաս կիտուտածոց՝ հանդերձ այլովք վայելչական զարդուքը հատ նմին և զգրետնց բազմութիւնս զանազան մատենից՝ առ ի լրումն հոգեւոր և մարմնաւոր ախորժակաց հասարակաց, ևս և զարեելեան կողման ձեռակերտն ծագէ ի ծագ՝ սա շինեաց. Եղ և արտաքոյ պարսպի սորա շինութիւնս ոմանս, զերից յարկաց ձիթաստանաց, և զասպաստանսն՝ ի բնակութիւն ձիոց և ջորուց, և զայլ պիտոյից տեղին՝ հանդերձ այգեստանօք և բուրաստանօք յոլովիւք հոգացմամբ՝ շուրջ զնովաւ՝ և ի սմանէ բացակայ. Այլ նախկին դասիւ թէպէտ և վերջին ըստ կառուցման նորոգեաց մեծածախ և զվկայարանս հանգստեան սրբոյն Հորիսիմէի և Գայիանեայ նորուն դայեկի, յորոց բարեխօսութենէ յայտնեցան և մասունք նշխարաց՝ մսքուր ոսկերաց նոցա թաքուցեալք յանակնունելի վայրի՝ ուր ոչ գոյր կարծիք. ուստի երեսի իսկ խնամոց Տեառն առ վշտացեալ ազգս տակաւին ծագել, որով բարեյոյս արասցէ առ ինքն, զի մի իսպառ ընդ վայր հարցին. Սակայն և աստանօր զմնացելովքն ոչ զանց առնեմք, այլ ահա համառօտաբար անցանեմք ըստ որում և նախագրեցելովքս. Քանզի սկիզբն և պատճառ ձեռնարկութեան նորոգման գերազահ Աթոռոյս՝ երանելի հայրն մեր և պայծառ ջահն եկեղեցւոյ՝ սըրբազան Հայրապետն Հայոց մեծն Մովսէս եղեւ, որ և յնատուծոյ շարժեալ՝ ի սէր առ սուրբ աթոռս բազմաչարչար աշխատութեամբ անբերելի կրիւք՝ գուն գործեալ հոգւով յափ՝ սկիզբն արարեալ, նաին՝ մաքրեաց զոա իդիզակուտեալ աղբից՝ յորում թաղեալ էր շուրջանակի յամենայն կողմանց, զորս և ջրով ողողեալ հարթայատակ գետին պատրաստեաց. և ապա պարսպեաց ըստ որում և յաջողեցաւ, կատարեաց և զերից կողմանց շինուածսն, որ ի միջոցին, սրբեաց և զտածար սրբոյն Գրիգորի ի զազիր ծրտաց թուչնոց, ըստ որում աւերակաց վայրաց է անզարդութիւն, որպէս երբեմն և մարգարէն վասն Բաբելոնի նշանակէր, թէ՝ յուշկապարիկք բնակեօցին ինմա և ողնիք ծագս հանցին ինմա- դադարեցուցեալ զճոողական ձայնանոցա, որ զլսելիս մարդոյ խլացուցանէին, և զլուսարանսն վանդակապատ յօրինեաց. հանդերձեաց սալայատակ և զկոխելի երկիր, որ ինմա. և ևս յառաջեալ՝ ի բաց էառ զգմբէթ նորին՝ որ էր նիստ ի բնէ և իսախտեալ՝ և բարձրաբերձ իմն տեսակաւ

կանգնեց, յորոյ կատարման՝ և ինքն փոխեցաւ առ անձկալին իւր Քրիստոս. կացեալ յաթոռ Հայրապետութեան ամս չորս և ամիսս ըստ ամացն, սա երիցս չողաւ առ թագաւորն Պարուից և եգիտ շնորհս աւաշջի նորա, որով և ազատեաց զաթոռս ի ըլունագոյն հարկաց ծանրութենէ, որ ի պատճառէ անուղղագործ առաջնորդոց եղաւ ի վերոյ՝ իրեւ զանուր երկաթեայ: Եր սա յերկրէն Սիւնեաց, ի գաւառէն որ կոչի Աճենան ի գեղջէն Խոտանանու: Գոլով ամենեին պարզ բարոյիւք և ազատական մըտօք, գեղեցկադիր և փառազարդ դիմօք վայելչացեալ՝ զմիջինն ունելով չափ հասակին, և բոլորովին ներքին և արտաքին մարդով շնորհաշուք ճոխութեամբ արտափայլեալ, յորում յարացոյց զսուբբն զիսահտկ զարթեազինն համարեսջիր ըստ ամենայն բարէունակ տեսութեան, բնականօք և մակստացականօք առատացեալ գովարանութեամբ. և այսպիսի ցանկալի երեեալ աշխարհի և փափագելի ամենեցուն ծանուցեալ՝ փոխադրի յանմահական կեանսն վաթսուն ամաց: Եւ եղաւ պատուական մարմին նորա ի փոքրագոյն բլրին՝ որ հայի յարեւմուտս կոյս ի վերայ Հրաստան գետոյ, և ի հարաւակողմն ի կայարանն իւր սեպհական, որ է շիրիմ առաքելոյն Անանիայի, որ և է իսկ մենաստան կրօնաւորաց, պատեալ շուրջանակի պարսպաւ ի նորին աշխատանաց վաստակոց: Յետ որոյ յաջորդեալ նստի ի տեղի նորա յաթոռ Հայրապետական բարեփառ Տէրո մեր՝ զորմէ նախ բանիւ յիշատակեցաք սակաւուք և զգործոց նորա համառօտարար անցաք, որեւ արդ՝ փայլի յեկեղեցի Աստուծոյ՝ իրեւ ջահ անշինանելի, հաստատեալ իւլէմն անդրդուելի և յեցեալ ի խարիսխն անշարժ յուտոյն՝ պահպանեալ Հայրական աջովն և զօրացեալ վերնական խնամօքն: Արդ՝ սպին սա երջանկապատիւ և սրբազն Հայրապետս մեծաւ իմն սիրով և յաւէտ փափաքանօք ետ գրել զսուրբ տառս զայս լիապատում և ընծայեաց սուրբ ընդ բազում նուէ-ըս ի պայծառութիւն իւր և ի զրօսանս մանկանց իւրոց: Բայց ի սկզբնառութեան գրոց՝ պատահեցաւ բարեպաշտուհի և քրիստոսասէր կին ոմն, որոյ անուն ճանաչիւր Եարիխան, ի Տիգրանակերտ քաղաքէ, որ և եկեալ էր յերկրագութիւն աստուածակոլս տեղւոյս, յօժարեալ ցանկացաւ և ծախիւք ստացաւ զստ յարդար վաստակոց իւրոց՝ առ ի յիշատակագրութիւն

յինքենէ ի սուրբ աթոռս գանձ անճողապրելի. վասն որոյ և
թախանձանօք պաղատիմ առ հոգեւոր հարսդ և եղբարսդ, որք
զկնի մեր ժառանգէք զայս տառ, և ոյք վայելէք հոգեւորապէս՝
ընթերցմամբ կամ գաղափար առնլով և կամ իւկի ինչ օգտու-
թեամբ, յիշեսջիք բարեպէս մոգք՝ սրբանուէր աղօթիւք առ
Քրիստոս՝ յոյսն բնաւից՝ զերանելի հայրս մեր զտէր Փիլիպպո-
շնորհազարդ դիտապետ, որ առիթ եղեւ բարեաց բազմաց և
սոյն այսր մատենի ստացող՝ հանդերձ իւրովք ամենայնիւք աշա-
կերտեալ մանկամբք և համօրէն հոգեսնունդ որդեկօք: Եւ ըզ-
համեստաշուք և զերկիւղած կինն այն՝ Եարիխանն գոյիւք բո-
լորիւք կցորդող և զիւրային տոհմնն ամենայն, զայրն իւր զՄա-
ֆարն և զծնողսն իւր՝ զՀապիպն և զԲէկունն և զեղբայրն իւր
զմահտեսի ծուանկուլն և զքոյրն իւր Զենկի խանն և զղաւակսն
իւր՝ զԱստուածատուրն և զՊահարն և զմերձաւոր արեանա-
ռուսն: Նա և զգծող սորա յոքնաշխատ ջանիւք և կարի զգու-
շաբար հոգացողութեամբ յանգ հանող զՄտեփաննոս քահա-
նայ: Եւ զարդարող զսա ոսկեզօծ երանդօք և պէս պէս որակօք
զնահազետ գպիր. Տինա և զբոլոր զամենեսեան՝ որք հաղորդե-
ցան իրօք իրօք, զթուղթսն յարմարելով յընդունակութիւն ա-
րուեստուականութեան և զսրբագրութեան կարողութիւնն՝ առ
սա ցուցանելով. ևս և զյօժարամտութիւնս յոլովս երեւեցու-
ցանելով մինչև ի տիրապէս կատարումն՝ աղաշեմ և աղերսեմ
յիշել ի խորոց սրտէ առ գժութիւն և յողորմութիւն Քրիստո-
սի Աստուծոյ մերոյ: Որպէս զի ի միասին բոլորապէս յիշողօք և
յիշեցելովք գտցուք թողութիւն մեղաց և ներումն յանցանաց,
փրկութիւն յաւիտենական, և հանգիստ՝ անանց կենաց, յա-
ռատ բարերար կամաց ստեղծողին և նորոգողին զմեղ՝ Հօր և
Որդւոյ և Հոգւոյն սրբոյ՝ օրհնելոյն ի բնաւից գոյից և հանուրց
էից, անսահման բանիւ և անզրաւ պայմանաւ, անեզրական
խնդութեամբ և անզրաւ ցնծութեամբ, յարաձգական յաւի-
տենիւ, և անհուն քանակութեամբ. ամէն. եղիցի ելիցի:

Ընդ որս և ինձ իսկ Մովսէսի բանասիրի. վերջակարգեալ խուն
զրուցացս արարողի: Զիր հատուցման ընդ հուսկ յետինսն շուր-
հեսցի, որ մի ժամու յայգւոյ ծեառն առակարկի:

Եւ քանզի՝ ընդ յապաշմամբ անկեալ սոյն մատեան՝ առ ի բո-
լորապէս կատարումն իւր եղերել՝ փոխաղրեալ լինի յաստեացս


երանելի հայրապետն Փիլիպպոս՝ զորմէ և համառօտիւ իսկ ճառեցաք։ Ընդ որոյ յաջորդէ զաթոռ լուսաւորչին՝ բարեփառ և երջանիկ հայրապետն Յակովը ու, յամի հազարերորդի հարիւր երորդի և չորրորդի թուականութեան հայկական սեռի։ Դոլով հայրենեօք ի Զուղայոյ, որ է մերձ ի Նախջեան։ իսկ նախնականօք ի Երակ գաւառէ, այլ ծննդեամբ և սննդեամբ ի Նօշ քաղաքէ Պարսից։ ուր հայազունք յոլովք գոն պանդխտեալք այժմ, Սա այր ընտիր և առաքինի եղեալ, ողորմած և քաղցր առ ամենեսեան։ վասն որոյ և արժանաւորի գերադրական աստիճանի և գլուխ կոչի հանուրց հայկական տոհմի, և նստի ի քրիստոսազարդ և ի մեծապայծառ աթոռ սրբոյն Գրիգորի լուսաւորչին, առ որով և սոյն չքնազատեսակ և լիապատում տարեցուցակ գիրքս այս աւարտեցաւ՝ ոսկենկար երանդեօք և պատշաճագոյն նիւթովք և ենթակայիւք պաճուճեալ յօրինեցաւ ըստ ամենայնի։ Բայց գրեցաւ ձեռամբ Ստեփանոս քահանայի, և ծաղկափթիթ տեսակօք զարդարեցաւ՝ Ալեքսիանոսիւ և Նահապետիւ արուեստաւորօք։ Հոգացողութեամբ և սատարութեամբ Ստեփանոսի վարդապետի։ Եւ արդ՝ ընդ ժամանակս քաջ և բարի հովուապետին տեսոն Յակոբայ՝ յորում և մատեանս այս եզերումն ընկալաւ։ կատարեցաւ մեծածախ շինուածովք և սիրատեսակ և ճոխադիտակ ձեռակերտս հնչարանաց (զանգակատուն) յարեալ ընդ մեծի կաթուղիկէին և մօր Հայաստանեայց եկեղեցեաց, ուրանօր ձայնք բարձրագանչ զանգակաց՝ առ տիւ և առ գիշեր ըստ ժամու ժամու հնչեն և գոչեցուցանեն, սովաւ և ի ձեռն սորին՝ յաւելան և սպազք յոլովք և անօթք բազմաթիւք մեծի տաճարիս, ընդ որս և մատենից գումարութիւնք ի մի՛ ոչ սակաւք և նոցին հոգացողք և ի նոյնս պարապողք յոգնակաճառք. առ որով և շինուածոց ոմանց վայելչականաց հիմնարկութիւնք և այգեաց և բուրաստանաց յօրինուածք, և համանդամանայն բոլորապէս և մասնաւորաբար արդեանց վիճակելոց սեպհականութիւնք գործեցան՝ որք և աթոռոյս մեծի՛ առ ի լրումն ճոխութեան սահմանեցան, ոմնք պիտոյք և այլք զարդք պատեհականք։ Եւ արդ՝ ի սկզբ բանց ի գրութեանց անտի՝ մինչեւ ցաւարտումն մատենիս՝ են ամք հնդետասանք յորում լրապէս կատարեալ կնքեցաւ ի փառս և ի գովութիւն գերսկզբնական պատճառին ամենայնի, և

բոլորից շարունակողին, և վախճանական և յաւիտենական էին: Եղիցի եղիցի :

№ 1291 ձեռագիրը մեկնութիւն է Մատթէոսի Ներսիսի Շը-
նորհալւոյ և Յովհաննու Ծործորեցւոյ: Գրիչն է Յօհան երեց
Հիղանցի, 1633 թ. Քրիստոսի: Վերջում կայ մի յաւելուած
գրուած, որ վերաբերում է Սուլթան Մահմէտի պատերազմին
Լեհաց դէմ 1672 թուականին: Ինչպէս երևումէ այս գրած է
Յակոբ Կաֆայեցին, Երուսաղէմի պատրիարք Մարտիրոս Ղրիմե-
ցու աշակերտն, որովհետև ձեռագիրը շատ նման է այն չորս
շարք նախընթաց ձեռագրին. որով Յակոբ Կաֆայեցին խնդրու-
մէ ընթերցողաց յիշել նրանց աղօթքում:

Ահա այդ յաւելուած գրուածքը, որ հրատարակում ենք
իրեւ պատմական նիւթ, թէւ նա չէ վերաբերում Հայոց պատ-
մութեան. բայց վերաբերումէ Լեհաստանի այն մասերին, ուր
այդ ժամանակները բաւական բազմաթիւ հայ գաղթականներ
կային, որոնք անշուշտ կրած կլինեն պատերազմի դառնութիւնն,
Ի թուականին մերոյ հազար և հարիւր քսան և մի ամին մեծ և յաղթող
կայսրն Տաճկաց Սուլթան Մահմէտ որդի Խպրահիմին ել բազում զօրօք ի
պատերազմ ի վերայ Լեհաց աշխարհին, աւելի քան զհարիւր բիւր քա-
ջապէս պատերազմողք. իսկ մապարծ և գոռողաբան թագաւորն Լեհու ոչ
կարաց զդէմ ունել, այլ ետ խոյս և թաքեաւ յանկեան ուրեք թողով
զբուն աշխարհն իւր թշնամեացն ապաստան, որք սուր ի վերայ եղեալ զո-
մանս կոտորեցին և զումանս գերեցին զարս և զկանայս և զմանկունս մա-
տալս և զթիւ գերելոցն ՇՄ. ասացին չյայտնեն: Առին և զամրոց նորին,
որ կոչի Կամէնից և զայլս բաղումն քաղաքք և ամրոցք, բայց կայսրն ոչ
հաճեալ զայլսն, միայն զկամէնիցն առեալ և զայլսն տուեալ յաղագս Հար-
ին, որ հնազանդեցան Լեհցիք տալ ԽՄ. ոսկի ամ յամէ թագաւորին, այլ
և ՇՄ ոչխար և այսքան հանապազորդ հարկիւ հարկեալ զնոսս. ապա ցա-
նեալ ի բարկութեանց իւրոց կայսրն դարձաւ ի տեղի իւր: Բայց պատճառ
որումնութեան կայսեր նոյն ինքն թագաւորն Լեհաց եղեւ, որ իրու ընդ-
դինույ ուրուք ոկսաւ գլուխ ամբառնալ և գեսպանս յշել զայրացուցիչ հրո-
վարատիօք բաղմօք. վասն որոյ այդքան ոժիրք գործեցան և բազում եկե-
զեցիք մեծամենք, որք ի Կամէնից էին, գերեալ ի քրիստոնէից մզկիթք այ-
լագաւանները եղեն: Փառք ներողութեան քո Տէր. այս ամենայն եկն ի վե-
րայ մեր վասն մեղաց մերոց: Եւ առումն քաղաքին Կամէնեցու Օգոստոսի
ամսոյն եղն ի մագտիւ թուականին մերոյ:

Եւ ի միւսումն ամի ընդվզեալ Լեհցիք ոչ հնաղանդեցան տալ հարկս Օսմանցոց, վասն որոյ պրամուեալ կայսրն առաքէ զօրս բազումն ի վերայ աշխարհին Լեհցաց միանգամ և երկիցս և երկիցս մինչև կարի նուազել և տկարանալ Լեհցոց, զի ոչ մնաց տեղի անկոխն ուր ոչ եհաս ութ Օսմանցոց և մարդակեր աղջին թաթարաց և ապա պյուռէեաւ ակամայ ետուն Լեհցիք զիես իւրեանց աշխարհին ի ձեռս Օսմանցոց, զբերդս մանունս բազում և քաղաքք պարսպաւորը՝ Պատ, Ռւման, ի ժիպոժ և զպարաշ անուն և զայլս ումանս, Եւ եղին սահման ի մէջ երկոցունց զի մի մեղիցեն միւսանգամ առ իրեարս, Խոկ Թաճիկք յորոց և տիրեցին գաւառաց յայնմ աշխարհի եղին վերակացուս և պահապանս բերդից և ծառայս թագաւորական, որ ասեն են-կիչերի և աղայ և փաշայ, բայց յաղագս կեղծաւորութեան թեթևացուցին զհարկս ռամկաց հարկատուաց, զի պյուք որք ի ձեռս Լեհցուց բռնաւորաց նեղին գայցեն իսոցա կողմն և պյուռ սակաւ սակաւ որսայցեն զժողովուրդ աշխարհին Լեհցաց և հարստացուցեն զբաժին մասին իւրեանց, Յետ պյուրիկ այլ իմն գործ հնարեցան Օսմանցիք, քանզի տեսին թէ ոչ բարւոք նուաճեն Ռուսք ընդ ձեռամբ Թուրք բռնաւորաց և խորշին ի նոցանե յաղագս պյուդաւան գորշն նոցա ի քրիստոնէական կրօնից և հաւատոց, բերեալ զՊուլտանայ պարոնն սահմանեցին լինել նոցա համման (ատաման) և զամենայն հասս և զիրաւունս նոցա նորին ձեռամբ հաւաքեցեն և էր անուն պարոնին Յուգա.



ԱԿՆԱՐԿ ԱՐԱԲԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ,

Ա.

Քրիստոնէութեան Էրդ դարում պատմական առպարիզի վրայ երեւում է մի նոր ազգ միանգամայն և մի նոր կրօն, որոնք միմեանց վրայ յենուելով՝ անասելի արագութեամբ տարածուեցան Առիայում, Աֆրիկայում և մինչև իսկ Եւրոպայում. այդ ազգը Արաբացիքն են, կրօնը՝ մահմէտականութիւնը: Արաբիայի անապատներից դուրս գալով, Մահմէտի երեք անմիջական յաջորդները, Աբու-բէքր, Օմար և Օթման, իրանց հրոսակներով ողողեցին Պաղեստինը, Ասորիքը, Պարսկաստանը, Եգիպտոսը, և այն ժողովուրդը որ դարերով իւր երկրում փաթէ-կուած՝ համարեա անծանօթ էր մնացել աշխարհին, հարիւրտարուան ընթացքում աւելի զարմանալի աշխարհակալութիւններ արաւ քան նոյն իսկ Հռոմայեցիք:

Պարսկաստանը առաջին երկրներից մէկն էր, որ Արաբացիք նուաճեցին և իրանց կրօնին դարձրին: Այս ընդարձակ թագա-